Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի անգլերենի /8 դասաժամ/, մայրենիի /8 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց է անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) անձնագրի պատճենը,

4) ինքնակենսագրություն (Ձև 4),

5) Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման **օրվանից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 19-ին՝ ժամը 15:00-ին** /անգլերեն/ և **16:30-ին** /մայրենի/, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Սևան, Նաիրյան 173:

Տեղեկությունների համար զանգահարել (0261) 2-24-02 հեռախոսահամարով: